ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1879

ՇԱԲԱԹ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

№ 81 ՓՈՍՏԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 81

ԳԱՂԱՓԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ ԱՄԵՆ 10 ՄԻԶԱԿ ՏԱՌԵՐԻ Վ.ՃԱՐՆ Է 1 ԿՈՊԵԿ։

ԳԱՂԱՓԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ-ԵՆ ՀԱՅԵՐԷՆ ԵՒ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ։

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹՔ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

ՁՈՐՆԴՐԴԱԹԻ Հ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 8 Ռ.

ՕՏԶԱՐԱԳՈՂԱԳ. ԴԻՄՈՒՄ ԵՆ ՈՒՂՂԱԿԻ ԽԸ ՌԵԴ. ԳԱԶԵԹԻ „ՊՉԵԼԱ ԱՐՄԵՆԻ“ Գ. Тифлисъ.

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. Պետերբ. Վեդ. ռուս լրագրի յօդուածի առթիւ։

Ազգային.—Հայոց թէատրոն—Թըղթակցութիւնք Դաւրիժից և Շուշիից։ Նամակ խմբագրին։ Քաղաքական—Տաճկաստան—Անգլիա։ Մանր լուրեր։ Յայտարարութիւններ։ Բանասիրական — վարդապետն և նիժ։

ԹԻՖԼԻՋ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

Ռուսաց „Սանկտպետերբուրգսկիյա վեդոմոստի“ (Ս. Պետերբ. Վեդ.) լրագիրը իր № 262-ում խօսելով «Գօլոսի» հեռագրի մասին, որ վերարերում էր կարսի զինուորական հանձնագլխի պ. Ֆրանկենիի Հայոց երկաթ ղըպրոցները փակելուն, յորդորում է ընթերցողին դադար լինելու «Գօլոսի» հաղորդածին հաւատալուց, որովհետև անհաւատալի մի բան է, որ ռուս վարչութիւնն փակէ քրիստոնէից դըպրոցները մի երկրում, ուր մահմետական կանոնութիւնը պատերազմում է քրիստոնէութեան դէմ։ Յետոյ յիշեալ լրագրի խմբագրութիւնն աւելացնում է. «Մինչև անգամ իններորդ հայերի, որոնք մըտածում են սահեցնել ինքնուրոյն վարչութիւն Տաճկահայաստանի նահանգների համար, եթէ մուտ գործէր նաև կարս այնուամենայնիւ էր կարող արդարացնել այդպիսի գործողութեան եղանակը» (դպրոցների փակելը)։

Որքան էլ չնորհակալ ենք մեր պաշտօնակցի ակնարկութեան համար թէ ոչ մի կերպով չէ կարելի արդարացնել կարսի Հայ դպրոցների փակելն, այնու ամենայնիւ չենք կարող չզարմանալ այն հանգամանքի վերայ, որ մեծ. խմբագրութիւնը Տաճկահայոց հասկացող մասի ազնիւ ձգտումը Տաճկահայաստանի վիճակը բարելաւելու և նրան աւելի ազատ վարչութիւն տալու համար կոչում է ինտրիգա։ Այդպիսի խօսք դժուար էր և ցաւալի լսել մինչև անգամ մի մոլեռանդ և ազգ անհաշիւ մի մոլեռանդ, ուր ինայ, որ այդ խօսքն արտասանում է մի նշանաւոր լրագրի խմբագրութիւնն, այն ևս մի աերութեան մէջ, որ նոր գաղարից իւր արիւնը թափելու պատերազմում յանուն արևելեան քրիստոնէից ազատութեան։ Մի հին քրիստոնեայ ազգի ազնիւ ձգտումն ազատվելու սարկութեան կապերից, որոնց մէջ նա գտանվում է 800 տարիից աւելի իւր հայրենիքում, անընդհատաբար տանջվելով և չարչարվելով աւազակաբարոյ Քրդերից քրիստոնէութեան և իւր ազգայնութեան համար, կոչել ինտրիգա—կարծում ենք, որ աւելի քան ծանր և անպատեհ կլիներ վերոյիշեալ խմբագրութիւնն, եթէ միայն հշտած լիներ Հայ ազգին անցեալը։ Հայ ազգն, որ իւր անցեալում ցոյց է տուած իւր ընդունակութիւնը լուսաւորութեան և ամեն օգտաւէտ պարապմանց համար, ցոյց է տուած ձիրք քաղաքակրթութիւն ունենալու, որոց ապացոյցն են անթիւ փառաւոր յիշատակարանները, որոնց աւերակներով ծածկած է Հայաստան աշխարհն, չնայելով, որ 800 տարի շարունակ անհարատատ բարբարոս ձեռքեր նրանց ջնջման աշխատել են և ճգնում են այսօր էլ, Հայ ազգն, որ առաջին քրիստոնեայ ազգն է Ասիայի մէջ, խմորն սորա ապագայ քրիստոնէութեան և քաղաքակրթութեան, որպիսի կոչումն այդ ազգի ճանաչել են եւրոպացիք էլ, կարծում ենք, որ այդ ազգը աւելի արժանի էր ամեն հասկացող եւրոպացու կարեկցութեան և օգնութեան ազնիւ ձգտման համար դէպի կեանքի և աշխատանաց ապահովութիւն և քաղաքական իրաւանց հաւասարութիւնը, քան ենթարկվի յանդիմանութեան և ինարեգան անունը կրելուն։ Մենք կարծում ենք Ս. Պետերբ. վեդոմ. լրագրի խմբագրութիւնը պէտք է յափշտակվէր Հայ ազգի ձգտումով սարկութիւնից ազատվելու համար, եթէ միայն յիշէր թէ այդ հին ազգի մէջ որքան տոկունութիւն, համբերութիւն և բարոյական ոյժ պէտք է գտնվէր, որ նա ութը դարից աւելի անընդհատաբար պատերազմելով գերազանց ֆիզիքական ոյժի դէմ, տանելով աննկարագրելի հալածանաց, չէ անզգայացել և անտարբերութեան մէջ ընկել—եթէ միայն յիշէր, որ այդ ոյժը տուել էր նրան քրիստոնէութիւնն և ազգի գերազանց ձիրքն ու բարոյականութիւնը։ Մենք կարծում ենք, որ այսպիսի մի ազգի մէջ ազատութեան ձգտման մի նշոյլն անգամ պէտք է ուրախացներ ամեն բարեմիտ անձի, որ ազգից էլ լինէր նա, ուր ինայ մի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՆ ԵՒ ՆԻԺ

Նուիրուած գաւառում

Բ.

Ն Ի Ժ

Նորա ծանաչութիւնը Վարդապետից։

(շարունակութիւն*)

Գաշտավայր գիւղերի կատարելատիպն է Նիժը։ Գտնվում է Նուխի քաղաքից 64՝ Վարդապետից 30 վերստ դէպի հարաւարևելք։ Փռուած է մի փոս ընկած ընդարձակ հարթ հաւասար գաշտավայրի վերայ, չատ ուրիշ մանր գիւղերի մէջ, երկայնութիւնն է 7—8՝ իսկ լայնութիւնն աւելի քան 4 վերստ. բաժանուած է երկը զլխաւոր թաղերի՝ Մալբեկ, Դարթաղ, Պիծիլու. ունի 544 տուն, որից 70-ը թուրք. բնակչայ թիւն է 4116, 2175 արք) 1941 կանայք։ Ունի չորս եկեղեցի, երկուսը կուլածոյ քարից, կամարակապ, միւս երկուսը աղիւսաշէն և փայտածածկ. քարաշէն եկեղեցիներից մէկին (Ձոտանանց) կից չինուած է հայ Մեսրովբեան ուսումնարանը։ Գիւղը հովվում են հինգ քահանայք։

Նիժը իւր չրջանակութեան հետ միասին երեում է ինչպես մի անսահման ծովացած անտառ, փռուած ընդարձակ գաշտավայրի վերայ, որի հիւսիսային կողմից հեռուում բարձրանում են հուժկու կուկասեան անտառապատ լեռնները, տարուայ մեծ մասը ձիւնապսակ, իսկ հարաւից սահմանուած է Բօզների մի լեռնակով։ Այդ մեծատարած անտառը ընդհատուած է տեղ տեղ բրնձի արծաթագոյն ճահիճներով, ոսկերանգ արտերով և կանաչ թաւչոյ մարգերով։ Անտառի կեդրոնն է Նիժ աւանը, որի չուրջը փռուած են միմեանց կպած բաղմաթիւ հարևան գիւղեր, որոնց օդը, ջուրը, հողը, բերքերը, բնակիչների պարապմունքը, կեանքը, դրութիւնը չատ նման են մէկ մէկու և Նիժին, այդ պատճառաւ էլ բոլորը միասին կոչվում են մէկ ընդհանուր անուամբ Ղարաասու (սև ջուր). գիւղերի մեծ մասը թուրքաբընակ են. Դամատարայ (102 ար.+95 իգ.: 48 տուն), Ջարաղան (286+176: 113), Այդն Ղշլաղ (196+92: 79) փռաւի (54+42: 22), Միրզաբէյլու (Հայ 167+115: 47) Սուլթան Նուխի (576 +451: 120), Թարքէչ (93+59: 38), Սինջան 135+143:(49), Ղազալար (112 +73: 60), Մօլլա ալի (100+66: 41), Հայ Ջռաղու (171+130: 56), Թուրք Ջռաղու 263+114: 72), Ամէնթիլու (261+ 192: 127), Ջղամիլլու, Եմշանլու, Մալիքլու և մի քանի ուրիշ մանր գիւղեր, որոնց բնակիչները հարևան մեծ գիւղերի վերայ են հաշվում, խմբուած են Նիժ աւանի չուրջը. դոցա հեռաւորութիւնը առ առաւելն 2—6 վերստ է։

Կեդրոնական գիւղաքաղաքի բնակած տեղն, ինչպես ասացինք, հարթ է և սաստիկ փոս ընկած. դորա վերայ յաճախակի տեղացած անձրևներից կամիլ չի կորչում՝ ոչ դուրս հոսում և ոչ երկինք վերադառնում, այլ խիտ առ խիտ ծառերի տակ մնում չաբաթներով լճացած և գետին ծծվում տեղն ի տեղ. այդ պատճառաւ ևս Նիժի տեղը սաստիկ խոնաւ է և ճահճային. աղբիւրներին, ջրհաւաք տեղերին, լճակներին ու ճահիճներին թիւ չը կայ. չատ տներ ունին իրանց առանձին աղբիւրները, որոնց ջուրն այնքան հորդ՝ որ ջրաղացներ ու բրնձաղացներ են բանեցնում. տների հիմքը ցամաքեցրած առուների մէջ է դրած և չատերի յատակն այնքան խոնաւ է՝ որ մէջ մէջն ածած ցորենը կամ ուրիշ արմտին ձլում է. աւելացրէք այդչափ խոնաւութեան վերայ և հողի կուպրի նման սեւութիւնն ու կլիմայի չերմութիւնը և դուք գաղափար կունենաք Նիժի այնքան ճոխ պտղաբերութեան մասին, որով նա այսօր զարմացնում է ամեն ճանապարհորդի։ Բայլ այդքան ջրերից՝ Նիժի միջով անցնում է և Թուրգէն կատաղի գետը, որ չատ անգամ ու այգիներ է քանդել և չատ ադարակներ սերմախառն տղմով լցրել ու փոխանակ այնտեղ ցանուած ցորենին կամ կտաւատին՝ ուռի կամ ղվխի անտառով ծածկել տեղը, որով ապարակատրոջ մի աչքը լացացրել է, իսկ միւսը ծիծաղացրել։ Այդ գետը իւր սկիզբն առնում է Կովկասեան լեռներից խալխալ գիւղի և խաչմազի սկիզբներից ու, որովհետև խիստ զառիվայրներից է հոսում, միչտ արնթաց, պղտոր ու ամենամիղմ անձրևից յետոյ էլ հեղեղատաստ և կատաղի, երեք չորս տարին մի անգամ փոխում է իւր ուղղութիւնը՝ երբեմն Նիժի, երբեմն մօտիկ մի ուրիշ գիւղի միջից անցնելով ու ճանապարհները իրարամաւելով։ Տեղացիք գորան անուանում են գիժ գետ և, որովհետև ջրի կարօտ չեն, ձեռք են լուանում, չեն ուզում նորա տուած օգուտը, վնասն էլ նորան բաչխելով, միայն Թուրգէնը նոցանից ձեռք չի քաչում։ Շնորհիւ ահա այդ Թուրգէնի, բազմաթիւ աղբիւրների և յորդառատ անձրևների Նիժի և իւր չրջակայ գիւղերի ջրով յագեցած փողոցները տարուան մեծ մասն (աչուն, ձմեռ և գարուն) ներկուած են լինում մի գարչահոտ սև ցեխով, որի խորութիւնը չատ անգամ թոյլ չի տալիս և ձիաւորին անցնել անվտանգ իւր միջով, ոչ թէ միայն հետևակին. ահա թէ ինչու այդ միջոցներում նիւ կզանէր վերոյիշեալ խմբագրութիւնն, եթէ միայն կշռած լիներ Հայ ազգի անցեալը։ Հայ ազգն, որ իւր անցեալում ցոյց է տուած իւր ընդունակութիւնը լուսաւորութեան և ամեն օգտաւէտ պարապմանց համար, ցոյց է տուած ձիրք քաղաքակրթութիւն ունենալու, որոց ապացոյցն են անթիւ փառաւոր յիշատակարանները, որոնց աւերակներով ծածկած է Հայաստան աշխարհն, չնայելով, որ 800 տարի շարունակ անհարատատ բարբարոս ձեռքեր նրանց ջնջման աշխատել են և ճգնում են այսօր էլ, Հայ ազգն, որ առաջին քրիստոնեայ ազգն է Ասիայի մէջ, խմորն սորա ապագայ քրիստոնէութեան և քաղաքակրթութեան, որպիսի կոչումն այդ ազգի ճանաչել են եւրոպացիք էլ, կարծում ենք, որ այդ ազգը աւելի արժանի էր ամեն հասկացող եւրոպացու կարեկցութեան և օգնութեան ազնիւ ձգտման համար դէպի կեանքի և աշխատանաց ապահովութիւն և քաղաքական իրաւանց հաւասարութիւնը, քան ենթարկվի յանդիմանութեան և ինարեգան անունը կրելուն։ Մենք կարծում ենք Ս. Պետերբ. վեդոմ. լրագրի խմբագրութիւնը պէտք է յափշտակվէր Հայ ազգի ձգտումով սարկութիւնից ազատվելու համար, եթէ միայն յիշէր թէ այդ հին ազգի մէջ որքան տոկունութիւն, համբերութիւն և բարոյական ոյժ պէտք է գտնվէր, որ նա ութը դարից աւելի անընդհատաբար պատերազմելով գերազանց ֆիզիքական ոյժի դէմ, տանելով աննկարագրելի հալածանաց, չէ անզգայացել և անտարբերութեան մէջ ընկել—եթէ միայն յիշէր, որ այդ ոյժը տուել էր նրան քրիստոնէութիւնն և ազգի գերազանց ձիրքն ու բարոյականութիւնը։ Մենք կարծում ենք, որ այսպիսի մի ազգի մէջ ազատութեան ձգտման մի նշոյլն անգամ պէտք է ուրախացներ ամեն բարեմիտ անձի, որ ազգից էլ լինէր նա, ուր ինայ մի

սիրութիւնն ու կեանքի մի օրինակ չափաւորութիւնը, որոնց է պարտական նիժեցին իւր առողջութեան հետ և իւր մեծ հարստութիւնը, ինչպես ցոյց կը տանք իւր տեղում։

Նշանաւոր է Նիժը չատ իւր ընդարձակութեամբ. այդ կողմից գաւառիս մէջ ոչ մի գիւղ չի կարող սորա հետ մրցել. արդէն ասուած է՝ որ սորա տարածութիւնն է աւելի քան քսան և ութ քառակուսի վերստ, որչափ չեն լինում և չատ քաղաքներ էլ։ Դորա պատճառն այն է, որ այստեղ չատ անգամ տան այգին, արտուտեղին, պարտէզը երբեմն և արտն իսկ բոլորը մի ցանկով են չրջապատվում, որոնց մէջ գտնվում է և տանուտիրոջ բնակարանը. տուն կայ որ (այ սինքն կալուածք)՝ չրջապատը երեք վերստից աւելի է։ Տներն այնքան հեռու են միմեանցից՝ որ ամեն մէկը իւր բարեկամի տունը ձիով պիտի գնայ, իսկ հարևանը դրկելն կանչելու համար զուռնայ պիտի փչի։ Այդպէս է ամենքն այստեղ ձիաւեր են և ամեն օր հարանիք կայ, որ բացի Նիժեցուց ոչ ոք չի հասկանում թէ գալ ու զուռնան ոչ այլ ինչի համար են, քան մարդիկ կանչելու՝ գնալ մէկի արար փոխարայ հնձելու համար։ Տանից դուրս գալիս դուք հարցրէք տանտիրոջը՝ որ դարպասից դուրս գալ՝ որ մօտիկ լինի. չը մոռանաք և ապահով դուռը հարցնել, որովհետև տունն այստեղ ունի 10—12 տան կորատին պատախանատու, հատու՝ չուն, որոնք սովորաբար ցեղով ու գերդաստանով են ուխատած լինում ստանձնել որոշեալ տան պահպանութիւնը։ Տան մեծութեան չափով գերդաստանն էլ բազմանդամ է լինում. տուն կայ՝ որում հնահպատուով, մեծ մայրով, աղջիկներով, հօմն եղբայներով, հարսներով, թոռներով, ծոռներով, կռնեբով, միասին են բնակում, թուով մինչև

*) Տես «Մեղու» № 79

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՆԱՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԻՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՈՐԴՈՅ
1879 թուականին

ՎԱՆԱՑԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՓԵՏՐՎԱՐ 20 ՀԱՆՈՒԱՐ ՉՈՐՍ ՕՐ 1879 Թ.

ՎԱՆԱՑԱՆ

(ՕՐԱԹԵՐԹ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ)

ՓԵՏՐՎԱՐ

Ի ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բարեկամ մի ի հինգտասնից տարիս ի վեր ի մեզ ուսանելով, ի վերջոյ ընդունեցաւ զհրամանն Աստուծոյ, և ի մեզ ոչ ևս գտանելով զնա, ի ձեզ ուղարկեցաք զնա, զի ձեզ ևս ծառայեսցէ, որպէս ծառայեաց մեզ։ Եւ ի ձեզ ծառայելով, ի ձեզ ևս ուսանելով, ի ձեզ ևս կատարեցաւ։ Ուստի ոչ ինչ ինչ ասելոյ է մեզ ի նմա, բայց միայն զի ի ձեզ ևս ուսանելով, ի ձեզ ևս կատարեցաւ։ Ուստի ոչ ինչ ինչ ասելոյ է մեզ ի նմա, բայց միայն զի ի ձեզ ևս ուսանելով, ի ձեզ ևս կատարեցաւ։

Բարեկամ մի ի հինգտասնից տարիս ի վեր ի մեզ ուսանելով, ի վերջոյ ընդունեցաւ զհրամանն Աստուծոյ, և ի մեզ ոչ ևս գտանելով զնա, ի ձեզ ուղարկեցաք զնա, զի ձեզ ևս ծառայեսցէ, որպէս ծառայեաց մեզ։ Եւ ի ձեզ ծառայելով, ի ձեզ ևս ուսանելով, ի ձեզ ևս կատարեցաւ։ Ուստի ոչ ինչ ինչ ասելոյ է մեզ ի նմա, բայց միայն զի ի ձեզ ևս ուսանելով, ի ձեզ ևս կատարեցաւ։

ԱՐՏԱՔԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՎԱՆԱՅ ԵՒ ՅԱՐԱԿԱՅԱՑ ՎԱՃԱՌՔԻ

Ի ՎԱՆԱՅ ԵՒ ՅԱՐԱԿԱՅԱՑ ՎԱՃԱՌՔԻ

ՎԱՃԱՌՔ

թանը սկսում է հետզհետէ աւելի կասկածանքով վերաբերուիլ դէպի Անգղիայի գործողութեանց փոքր-Ասիայի նահանգներում և աշխատում է հեռացնել գործելու ասպարիզից այն անձանց, որոնք յայտնի են աւելի իբրեանց բրիտանական քաղաքականութեան հակումներով: Եւ հէնց այս պատճառաւ էլ Խայրեդդին-փաշայի տաճկական մայրաքաղաքից մօտիկ ապագայում հեռացնելը շատ էլ անհաւատալի չէ թւում, չնայելով մինչև անգամ որ Լայարդը, ինչպես յայտնի է, մեծ հաստատամտութեամբ պաշտպանում է նորան սուլթանի առաջ:

Կ. Պոլիս օրէցօր մեծ բազմութեամբ գալիս են անգլիական սպաներ և գործակատարներ, որոնք նշանակուած են փոքր-Ասիա գնալու: Սորանից երեք օր առաջ գնդապետ Ստենլին սիր Լայարդի յանձնարարութեամբ ուղևորուեցաւ Բրուսսա այնտեղի նահանգապետ Ահմեդ-Վեֆիկ-փաշայի հետ համաձայնութիւն կապելու անգլիական կառավարութեան վարչականների իրագործման վերաբերութեամբ:

Նորերումս սուլթանի պալատում ի պահու ֆրանսիական դեսպան՝ պ. Ֆունիէի տրուած ճաշին ներկայ էր ի միջի այլոց և Սախի-փաշան: Օգուտ քաղելով այս հանգամանքից – գուցէ մինչև անգամ այս պատահմամբ էլ չէր—սուլթանը այս երկու անձանց հաշտեցրեց, որոնք ինչպէս ձեզ արդէն յայտնի է, անհաշտ էին իրար հետ Պուրսայում տեղի ունեցած դըժգոհութիւնից յետ: Երբ հաշտութիւնը կայացաւ Արդուլ-Համիդն, ասում են, յայտնեց որ Սայիդ-փաշային շուտով Աարիֆի-փաշայի տեղ նշանակելու դիտաւորութիւնն ունի: կարող է պատահել որ այդպիսի բան պատահի, նա մանաւանդ որ Սախի-փաշայի մեծ եպարգոս նշանակուելու գլխաւոր արգելքը մինչև այժմ Ֆրանսիական դեսպանի Թշնամական յարաբերութիւնն էր դէպի նա:

***

Նոյն լրագրին հեռագրում է «Միջազգային ընկերութիւնը» Մանչեստրից ամսոյս 6-ին հետեւեալը.

Մարիլ Սալիսբէօրին մի ինձոյքի ժամանակ ճառ ասաց, որոյ մէջ յայտնեց թէ Անգղիան բռնեց կիպրոսը ապացուցանելու համար որ բրիտանական կառավարութիւնը իւրեան պարտք է համարում այդ Ռուսաստանի կողմից նոր նուաճումների առաջն առնելու համար: Բալքանների պաշտպանութեան վերաբերութեամբ հըռետորը ենթադրում է, որ գործերի ներկայ դրութեանը նայելով յարձակումից վախենալու քիչ պատճառներ կան: Որպիսի վտանգաւոր քաղաքականութիւն էլ բռնէ Տաճկաստանը այնուամենայնիւ, այդ չէ կարող արգելել Անգղիային Ռուսաց դէմ կ. Պոլիս դիմելու առաջն առնելուն: Սլաւոնական կայսրութեան մէկ ծովից մինչև միւսը տարածվելն արգելք լինելու խնդիրը Աւստրիայի վերայ է: եթէ Անգղիան այլ ևս հաւատ չէ ընծայում տաճիկ պետներին, նա կարող է վստահիլ աւստրիական զօրաց վերայ, որոնք իրր պահապան կանգնած են Բ. Պրան մօտ: Անգղիան չկարողացաւ յուզել Տաճկաստանի մէջ մի որ և է ապստամբութիւն Ռուսաստանին դիմադրութիւն ցոյց տալու համար, որովհետև այն տեղ չկայ համապատասխանութիւն: Ռուսաստանը չէ կարող առաջ գնալ, որովհետև Աւստրիան զօրելիս է: Աւստրիայի զօրութիւնը և անկախութիւնը երաշխաւոր են Եւրոպայի խաղաղութեան հաստատութեան: վերջին շաբաթների եղելութիւնները բրիտանական կառավարութեան իրաւունք են տալիս մտածելու, որ եթէ Աւստրիան յարձակման ենթակայ լինի այն ժամանակ նա միայնակ չի լինիլ: Աւստրիայի և Գերմանիայի մէջ յարձակողական և պաշտպանողական դաշնակցութեան կապուելու լուրը այստեղ մեծ ուրախութիւն պատճառեց: վերջումը, Մարկիզ Սալիսբէօրին Աֆղանիստանի անցքերի պատմական մի համառօտ նկարագիր արաւ, որոյ վերաբերութեամբ յայտնեց թէ Անգղիայի նպատակը պաշտպանութեան և ոչ թէ երկրների ընդարձակելու մէջն է կայանում:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 16-ին երեքշաբթի առաւօտեան երկարամեայ հիւանդութիւնից յետոյ վախճանուեցաւ Թիֆլիզում Սարդիս արքեպիսկոպոս Չալալեանցը: Նա ասում են կտակել է 25,000 ռուբլի հայոց ուսումնարանների համար, որ գործ սկսեն 125 տարուց յետոյ նորա չահը. մինչև այս ժամանակամիջոցի լրանալը ոչ ոք իրաւունք չունի ծախսելու ոչ դրամագլխից և ոչ չահից ոչ մի կոպէկ: Գումարը պիտի գնալ որ և է բանկ: Սրբազանը իւր մեռնելուց մի քանի օր առաջ իւր բոլոր ինչքը իբրեն յիշատակ բաժանել է իւր ծանօթներին և պահողներին, այնպէս որ նորա մահից յետոյ նորա ինչքը կընքող կոնսիստորիայի անդամը ոչինչ մի նշանաւոր բան չէ գտել նորա տանը բացի մի քանի չորերից և մի արկղից լիքը ձեռագիր գրքերով:

***

Ամսոյս 15-ին Թիֆլիզի մէյդանում Հալուաբարի կամրջի մօտ մի քանի լմնդրելներ կանգնած են լինում մի հրացան պինդ որ լցրած է լինում պնդակով: Մինը նոցանից ձեռք առնելով հրացանը կամայ թէ պատահմամբ արձակում է իւր ընկերոջ վերայ որը նոյն րոպէին մեռնում է մի քանի լուսք միայն կարողանալով ասել: Զարագործը չուտով անյայտացել է:

***

Խմբագրութիւնս չնորհակալութեամբ ստացաւ պ. Կամսար Տէր-Դաւթեանից նորա աշխատասիրած ռուսերէն լեզուի «РУССКОЕ СЛОВО» դասագրքի երրորդ տպագրութիւնը: Երրորդ տպագրութիւնը համեմատելով առաջինների հետ չատ արժանաւորութիւններ ունի. նա բաւական փոփոխած և աւելացրած: Աւելացրածների մէջ ուշադրութեան արժանի են հայոց կեանքին վերաբերեալ յօդուածները, Արարատի սուրբ Յակովբայ ազբիւրի և մի քանի ուրիշները մեծ մասամբ Շոպենից հանած մի քանի փոփոխութեամբ չը նայելով որ հայոց կեանքին վերաբերեալ ուշադրութեան արժանի յօդուածներ չատ քիչ կան Ռուսաց մէջ: Տիպը մաքուր է որից զուրկ են չատ այդպիսի դասագրքերը: Գինը 45 կոպէկ է, գումարով առնողներին զիջուն կ'լինի, եթէ գիմեն ուղղակի աշխատասիրողին:

***

Ամսոյս 15-ի գիշերը ժամը 10 ին ըստ սովորութեան պ. Միրզոյեվի հիւանդանոցում կոզմի խանութներում Միքայէլեան կամուրջի վերայ: Այրուեցան չորս խանութներ: Պատճառը ճիշդ յայտնի չէ, դանաղան տեսակ են պատմում: Հրդեհի չը սարսափելուն չատ օգնեցին հրաշարէպներ (բրանդսպաւէր): Լաւ կ'լինէր, որ նոր չինութիւնք անողները չատ չինեն այդպիսի պատեր:

***

Բացվեցաւ ԹԻՖԼԻԶՈՒՄ և՛ պրէկաչիների կլուբ: Տեսնենք սա ինչ օգուտ կ'բերէ: Արհեստաւորաց կլուբը մեծ յոյսերով և խոստումներով բացվեցաւ, ապարդիւն մնաց. և միայն անօգուտ զուարճութեան տեղ դարձաւ. երանի թէ պրէկաչիների կլուբը նորա օրինակին չը հետևէր և արդիւնաւոր լինէր հասարակութեան այդ երիտասարդ զաւակին:

***

Կ. ՊՕԼՍԻՑ անգղիական «Սատնդարդ» լրագրին հեռագրում են 9-ին ներկայ ամսոյս, որ նախարարների խորհրդարանում քննվում էր հարցը քրիստոնեաներուն տաճիկ զօրքերի մէջ ընդունելու մասին: Մեծամասնութիւնը յօդուտ հարցին կարծիք տուեց: Այս պատճառով որոշվեցաւ այսուհետև քրիստոնեաների որդոց թոյլ տալ մտնելու զինուորական դպրոցներն, որոնց դռները փակ էին նոցա համար մինչև ցայժմ:

Խմբագիր Պ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ:
Հրատարակիչ Հ. ԷՆՓԻԱՋԵԱՆՑ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ԼՕՅՍ ՏԵՍԱԻ
„ՓՈՐՋ“
ԱՄՍԱԳՐԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ (X) ՀԱՄԱՐ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Ի. Թիֆլիզի հայք և նոցա վաճառատրութիւնը, Ա. Երիցեանի 2. Ձանազարհորդական նկատողութիւնք, Քաջբերունի 3. Հայկական Թէատրոնի անցեալը, Մ. Ազարէգեանի 4. Օտար լեզուների դասատուութեան եղանակները, (վերջ) 5. Ձանազարհորդութեան տպաւորութիւններ, Սիւլիւկ 6. Մեղ ինչ է պակաս, բանաստեղծութիւն Գամառ—Քաթիպայի ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ 7. Լուսնեան տոհմի մասին, Ծերենց ՅԱՒԵԼՈՒԱՆ 8. Չինկսի երեսային, քաղաքական—երգիծաբանական գրոյց, գործ Լդուարդ Չենկինսի 9. Յայտարարութիւններ

Սարագրուել կարելի է Տփղիսում «Փորձի» խմբագրատանը և կեդրոնական գրավաճառանոցում: Օտարաքաղաքացիք կարող են գիմել խմբագրին հեռեհետ հասցէով. — Тифлисъ. Въ Редакціи Армянскаго журнала «ПОРДЗЪ»

Խմբագիր—հրատարակիչ
Աբգար Յովհաննիսեան:

2 — 3.

Ս. ԿԱՏՅԻ
ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ԳԵՊՈ



Ստանում է մեծ քանակութեամբ չարունակաբար ծովի ընտիր ժամացոյցներ եւրոպական զանազան երեւելի գործարաններից: Ստացուած է նոյնպէս մեծ քանակութեամբ փարիզի աշխարհահռչակեալ պատի և գրասեղանական ժամացոյցներ ու զարթեցնող մեքենայ: Ժամացոյցների ուղիղ բանելուն երաշխաւոր է խանութի տէրը: Խանութը գտանվում է Դվորցովի փողոցում № 8:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Դուրս եկաւ Զաք. Գրիգորեանցի Կովկասեան դրավաճառանոցի հրատարակութեամբ,

«Ծերենց—երկունք ինչ երօրէ դարու» վերնագրով—Թորոս Լևոնի հեղինակի նոր աշխատասիրութիւնը:

Գինն է ամէն տեղ մի ռուբլի

Այս օրերս մամուլի տակ կընկնի պ. Հ. Զուկասեանցի աշխատասիրած «ընդհանուր պատմութեան» հին դարը Զաք. Գրիգորեանցի հրատարակութեամբ:

4—10

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է կամսար Տէր-Դաւթեանցի РУССКОЕ СЛОВО—նոր դասագիրք Ռուսերէն լեզուի հայ դպրոցների համար, ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ, նորանոր յօդուածներով և փոփոխութիւններով լրացրած: Այս գիրքը հաճութեամբ պ. Թեմական վերատեսչի ընդունուած է Վրաստանի և Իմերէթի վիճակի հայոց բոլոր միջնակարգ և ծխական ուսումնարաններում: Սա ընդունուած է նոյնպէս Կովկասի և միւս թեմերի ուսումնարաններից չատերում- Վաճառվում է Թիֆլիսում «Կենդրօնական» և միւս բոլոր գրավաճառանոցներում: Գինն է 45 կ.: Ձանազարհի ծախսը առնողների վերայ է: Գումարով առնողներին մեծ զիջում կը լինի, եթէ գիմեն ուղղակի աշխատասիրողին այս հասցէով. Тифлисъ. Камсару Теръ-Давдянцу, въ магазинѣ Бр. Абовьянцъ; на Михайловскомъ мосту.

3—5

Վիճակաւոր Ա. Աջոյնորդն Հայոց Վրաստանի և Իմերէթի Հանդերձ դասու հոգևորականաց Տփղիսոյ ցաւօք սրտի ծանուցանելով բարեպաշտ ժողովրդականաց քաղաքիս գիւղխումն յատեցաց պերապատիւ Արգոի Սրբազան արքեպիսկոպոսի Հասան Չալալեանց հրատարէ վնասս ի Հանդէս յուղարկաւորութեան Հանգուցելոյն ի տանէ բժշկապետ Լիսիցեանցի ի մայր եկեղեցին վանաց ի 20-ն ամսոյս յաւուր շաբաթու ի 3 ժամու. յետ միջօրէին: Իսկ կարգն օծման և թաղման կատարեսցի յաւուր կիւրակէի ի 21 ամսոյս ի 10-ն ժամու. առաւօտու:

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ ТИФЛИСЪ 19-го ОКТЯБРЯ 1879г. Типографія Амб. Эпфіаджянцъ и К-о

Տան Բժշկապետ Մ. Ռոտինեանց: